



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

අරුත ව.

අනුරාධපුරයේ

1904 අ.

19 NOV 2010

ՀԻՉ. ՅԵՂ. ՍՕՑ. - ԴԵՄՕԿ. Կ. - ԹԻԻՆ

Պրոֆեսարներ քոչար երկրների միացիոն:

Մ. ԳՈՐԿԻ

ԿԵԱՆՔԻ ԴԻՄԱՑ

Handwritten signature in blue ink.

Հրատ. «ԸՆԿԵՐ» Մասնատիրոջի

No. 1

Ժողով. Անդաման

CONSTANTINOPLE

ՀԳՈՒՍՉՈՒԲ

«Անրամենոսիան»-ի

1904

891.71
9-83

Printed in Turkey

3092

ՀԱԶ. ՅԵՂ. ՍՕՑ. - ԴԵՍՕԿ. Կ. - ԹԻԻՆ

Պրոֆեսորիներ բարր երկրների՝ միացե՛լ:

891.71

Մ. ԳՈՐԿԻ

5

Գ - 83

ԿԵԱՆՔԻ ԴԻՍԱՑ

105 Կ

Հրատ. «ԸՆԿԵՐ» Մասնագիտի

No. 1

Թարգմ. Անրիսնան

ԲՈՒՍՉՈՒՔ (= Բուսչարիս)

Տպարան «Վերածնունդի»-ի

1904

22 .03. 2013

10708

27 AUG 2006

Printed in Turkey

ԿԵԱՆՔԻ ԴԻՄԱՑ

(Մ. Գորկիից)



873
40

Կեանքի դիմաց սառն դէմքով կանգնած էին երկու մարդ, երկուսն էլ նրանից դժգոհ, այս հարցին՝ ի՞նչ էք սպասում դուք ինձանից, — նրանցից մէկը յոգնած ձայնով ասաց, — «Ես զայրացած եմ քո հակասութիւնների անխղճութիւնից, իմ բանակահանութիւնը թոյլ կերպով աշխատում է հասկանալ կացութեան միտքն ու քո առաջ իմ սիրտը լցւած է աղօտ վարանումով: Իմ ինքնագիտակցութիւնն ասում է ինձ, որ մարդը բոլոր արարածներից բարձրն է»:

«Ի՞նչ ես ուզում դու ինձանից» —
անտարբերութեամբ հարցրեց կեանքը:
— «Բաղդաւորութիւն» . . .

Իմ բաղդաւորութեան համար ան-
հրաժեշտ է, որ հաշտեցնես. իմ հոգու
հակասութիւնները երկու հիմունք-
ներն՝ իմ «ուզում եմ»-ը քո «դու
պարտաւոր ես»-ի հետ :

— Ցանկացի՛ր ա՛յն, ինչ պարտաւոր
ես ինձ համար, — ճառնորէն անաց
կեանքը:

— Ես քո դէմը լինել չեմ ցանկա-
նում, — բացականչեց մարդը, — կեանք-
քի տէրը լինել եմ ուզում. ես պէտք
է իջնեմ պարանոցը նրա օրէնքները
լուծի մէջ: — Ինչո՞ւ համար:

— Դէ, պարզ խօսեցէք, — անաց
միւսն, որը կեանքին աւելի մօտ էր
կանգնած: Իսկ առաջինը չարունա-
կեց, առանց ուշադրութիւն դարձնե-
լու ընկերո՞ջ խօսքերին:

— Ես ազատութիւն եմ ուզում, —

ապրել ներդաշնակութեան մէջ, իմ
ցանկութիւններով, ես չեմ ուզում
ինձ մօտիկները համար՝ պարտակա-
նութեան զգացմունքի համաձայն՝ ոչ
եղբայր լինել եւ ոչ ծառայ, ես կը լի-
նեմ այն՝ ինչ կ'ուզեմ, ազատ ստրուկ
կամ եղբայր:

Ես չեմ ցանկանում հասարակու-
թեան մէջ լինել քար, որը հասարակ-
ութիւնը կը շարէ ինչպէս եւ ուր
ուզում է՝ ի՛ր հանգստութեան համար
յարկերը շինելով, — ես ՄԱՐԻ եմ, ես
կեանքի սփիւն եմ ու բանականութիւնն
եւ պէտք է Ա.ՁԱՍ լինիմ):

— Սպասի՛ր, — ասաց կեանքը սառն
ծիծաղելով, — դու շատ խօսեցիր, եւ
բոլորն, ինչ որ կ'ասես՝ ինձ վաղուց
յայտնի է: Ի՞նչ ուզում ես ազատ լի-
նել: Ի՞նչ կայ որ: Եղբ՛ր, Մարտն-
չի՛ր ինձ հետ, յաղթահարի՛ր ինձ եւ իմ
տէրը եղիր, ես քո ստրուկը կը լի-
նիմ, դու հօ գիտես, որ ես անտար-

րեք եւ եւ ինձ յաղթողներին հեշտու-
թեամբ եւ հպատակումս Բայց յաղ-
թե՛լ պէտք է: Դու ի սէր քո ազատու-
թեան՝ ինձ հետ կուեղու ընդունա՞կ
ես: Յաղթանակի համար դու բաւական
ուժե՞ղ ես եւ քո ուժերին հաւատո՞ւմ
ես:

Եւ մարդը յուսահատութեամբ ա-
սաց՝

— Դու ձգեցիր ինձ կուի մէջ՝ ինքս
ինձ հետ, դու մաշել ես իմ բանակա-
նութիւնը, դանակի նման նա խոր
ցցեաց հոգոյս մէջ եւ արորեց նրան:

Դէ՛, դուք նրա հետ խիստ խօսեցէք.
մի խղճահարւի, — ասաց միւսը, Իսկ
առաջինը շարունակեց:

— Ես քո ճշնումից ուզում եմ հան-
գատանալ: Ա՛հ, թոյլ տուր ի՛նձ եւս
մասնակից լինել քո բաղդաւորու-
թեանը:

Նորից ծիծաղեց կեանքը, ծիծաղով,
որը նման էր սատոյցի փայլին:

— Ասա՛, երբ դու խօսում ես, պա-
հանջո՞ւմ ես թէ խնդրո՞ւմ:

— «Խնդրում եմ», — ինչպէս ար-
ձագանք ասաց մարդը:

— Դու սովորած մուրացկի նման
ես խնդրում, սակայն, խղճուկդ իմ,
ես քեզ պէտքէ ասեմ, որ կեանքը ո-
ղորմութիւն չէ տալիս: Եւ գիտես ինչ:
Ազնտը— չէ խնդրում, նա ինքն է վերց-
նում իմ բարիքները: Իսկ դու մի-
այն քո ցանկութիւնների ստրուկն ես,
ոչ աւելի: Ազատ է նա՛, ով ոյժ ունի
բոլոր ցանկութիւններից հրաժարելու
որպէսզի ամփոփւէ մէկ բանի մէջ մի-
այն: Դու հասկացա՞ր: Հեռացի՛ր:

Նա հասկացաւ եւ շան նման պառ-
կեց անտարբեր կեանքի ոտերի առաջ,
որպէսզի որսայ, միայն նրա սեղանի
փշբանքները, մնացորդները:

Այն ժամանակ սառն կեանքի ան-
գոյն աչքերը նայեցին միւս մարդու
վրայ:

Նա կողիտ, բայց բարի դէմք ունէր:

— Դո՞ւ ինչ ես խնդրում:

— Ես չեմ խնդրում, ես ՊԱՀԱՆ-
ՋՈՒՄ եմ:

— Ի՞նչ:

— Ո՞ւր է արդարութիւնը, բեր
այստեղ նրան: Բոլոր մնացածը ես յե-
տոյ կը վերցնեմ, առ այժմ ինձ հար-
կաւոր է միայն արդարութիւնը: Ներ-
կար սպասեցի, համբերեցի. նրան
սպասեցի աշխատանքի մէջ, առանց
հանգստի, առանց լոյսի: Ես սպա-
սեցի:

Բայց բաւ է: Ինձ ժամանակ է ԱՊ-
ՐԵԼ:

Ո՞ւր է արդարութիւնը: Ո՞ւր է ար-
դարութիւնը:

Եւ կեանքը նրան անտարբերու-
թեամբ պատասխանեց՝ «ՎԵՐՑՐՈՒ»:



«Ազգային գրադարան»



NL0318615

891.71

9-83